



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վաղաշեն համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ. Վաղաշեն, (0262)-4-36-42, vaghashen.gegharquniq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

3-ը մարտի 2020 թվականի N 5-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 3-Ի ԹԻՎ 3 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի պահանջով՝ **համայնքի ավագանին որոշում է.**

- Հաստատել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վաղաշեն համայնքի ավագանու 2020 թվականի մարտի 3-ի թիվ 3 արտահերթ նիստի օրակարգը՝
1) Վաղաշեն համայնքի ավագանու 2020 թվականի փետրվարի 18-ի N4-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին.
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -5

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՖԵՈՂՈՐ

ՀԱԿՈՔՅԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ

ՍՈՒՎԱՐՅԱՆ ԿԱՐԵՆ

ՍՈՒՎԱՐՅԱՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

ԱՐԹՈՒՐ ՍՈՒՎԱՐՅԱՆ

ԼԱԶՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վաղաշեն համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ. Վաղաշեն, (0262)-4-36-42, vaghashen.gegharquniq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

3-րդ մարտի 2020 թվականի N 6-Ա

ՎԱՂԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 18-Ի
N4-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի հունվարի 31-ի N76-Ա որոշումը և նկատի ունենալով, որ Վաղաշեն համայնքի «Օստներ» կոչվող թաղամասի նորակառույց գազատարի սեփականության իրավունքի գրանցման վկայականում կատարվել են ուղղումներ՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վաղաշեն համայնքի ավագանու 2020 թվականի փետրվարի 18-ի «Վաղաշեն համայնքի «Օստներ» կոչվող նորակառույց թաղամասի նոր կառուցված գազատարը համայնքի հաշվեկշիռ ընդունելու, «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության հետ գույքի անհատույց օգտագործման պայմանագիր կնքելու և Վաղաշեն համայնքի ավագանու 2019 թվականի հոկտեմբերի 18-ի N44-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N4-Ա որոշման մեջ կատարել փոփոխություններ՝
 - 1) որոշման 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.
«1. Վաղաշեն համայնքի «Օստներ» կոչվող նորակառույց թաղամասի նոր կառուցված 13410.0 հազար դրամ (տասներեք միլիոն չորս հարյուր տասը հազար դրամ) ընդհանուր արժեքով, 2228 մ ընդհանուր երկարությամբ գազատարը (վերգետնյա d=76 մմ, L=237.2 մ մետաղական, վերգետնյա d=108 մմ, L=67.1 մ մետաղական, վերգետնյա d=57մմ, L=17 մ մետաղական, ստորգետնյա d=110 մմ, L=256.5 մ պոլիէթիլենային, ստորգետնյա d=90 մմ, L=1478 մ պոլիէթիլենային, ստորգետնյա d=57 մմ, L=30 մ մետաղական, ստորգետնյա d=108 մմ, L=1.2 մ մետաղական, ստորգետնյա d=90 մմ, L=13 մ պոլիէթիլենային, ստորգետնյա d=63 մմ, L=128 մ պոլիէթիլենային), ինչպես նաև 1 հատ GS-74-27HU2000 գազակարգավորող կայանը, 2 հատ վերգետնյա d=80 մմ, 1 հատ վերգետնյա d=100 մմ սողնակ փականներն ընդունել Վաղաշեն համայնքի հաշվեկշիռ:»:
 - 2) որոշման 2-րդ կետից հանել «անորոշ ժամկետով» բառերը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -5

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՖԵՈՂՈՐ 

ՀԱԿՈԲՅԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ 

ՍՈՒՎԱՐՅԱՆ ԿԱՐԵՆ 

ՍՈՒՎԱՐՅԱՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ 

ՎԱՐԴԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ 

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ 

ԱՐԹՈՒՐ ՍՈՒՎԱՐՅԱՆ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ 

ԼԱՋՐ ԿՈՎԿԱՆՆԻՍՅԱՆ

